

ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Վ. Խ. ԱԼԵՔՍԱՆՍԱՆ

Հայ բառարանագրությունը, որ առանձնահատուկ տեղ է գրավում մեր մշակույթի և առանձնապես հայերենագիտության պատմության մեջ, անցել է զարգացման տարբեր շրջափուլեր: Դրանք են.

1. Վաղ միջնադարյան կամ նախնական շրջափուլ, որն ընդգրկում է մինչև X դ.: Այդ ժամանակաշրջանում հիմնականում ստեղծվել են բառային-խմբեր (բառարանային նյութեր), բառաբացատրական, թարգմանական աշխատանքներ: Առավել սակավաթիվ էին մշակված և համակարգված բառացանկեր պարունակող բառարանները, որոնցից մեզ հայտնի են «Մեկնութիւն յերայեցւոց լեզուէ ի հայ», «Բառք քերթողական», «Բառք Գաղիանոսի բժշկապետի», «Թարգմանութիւն դեղոց», «Համառոտ գումարումն ու լուծումն բառից Աստվածաշունչ գրոց՝ յումեմնէ Երեմիայէ Մեղրեցւոյն» և այլն: Ավելի վաղ՝ հնագույն շրջանում ստեղծված բառարանների կամ բառացանկերի մասին տեղեկություններ մեզ գրեթե չեն հասել, թեև ամենայն հավանականությամբ V—VI դդ. այդպիսի ձեռնարկումներ եղել են:

Վաղ միջնադարյան հայ բառարանագրության մեծ առաքյալները եղել են հունարան հայերենի ներկայացուցիչները: Ի դեպ, հայտնի է, որ Հունաստանում կրթություն ստացած հայ ուսանողները գիտության զանազան բնագավառների (փիլիսոփայություն, ճարտասանություն, գրականություն, լեզվաբանություն և այլն) վերաբերյալ կազմում էին բառացանկեր, որոնք գործնական-ուսուցողական նշանակություն ունեին: Այդպիսիք էին, օրինակ, «Սահմանք փիլիսոփայականք», «Սահմանք բանականի մասին» և ուր բառացանկեր՝ ընդօրինակված հունարենից: Հունարան դպրոցի շրջանում հայ հին մատենագրության մեջ «բառաբան» կամ «բառագիր» տերմինների չենք հանդիպում: Դրանք հայ բառարանագրության մեջ հանդես են գալիս XIII դ. սկսած:

Հայերեն հին ձեռագրերում բառացանկերը կամ բառախմբերը վերնագրվում էին «բառք» կամ «բառից» անվանումներով, օրինակ՝ «Լուծումն բառից», «Գումարումն բառից», «Հաւաքումն բառից», «Մեկնութիւն բառից», «Թարգմանութիւն բառից» կամ «Բառք Վարդան գրոց», «Բառք Փիլոնի», «Բառք Նարեկա», «Բառք յունարէն», «Բառք գովասանականք», «Բառք Գաղիանոսի բժշկապետի», «Մեկնութիւն պարսիկ բառից ի Վարդան գրոց», «Բառք գովասանական վասն տղայոց ուսման» և այլն, հատուկ անունների բառացանկերից՝ «Բառք երբայեցւոց», մասնագիտականներից՝ «Բառք քերականի», «Սահմանք իմաստասիրականք», «Բառք Գաղիանոսի բժշկապետի», «Թարգմանութիւն դեղոց», «Բժշկական եռլեզվյա բառարան», ինչպես նաև «Այբբուն բառարաններ», որ իրականում բառացանկեր ու բառախմբեր են: Նույնը կարելի է ասել բուսանունների, տեղանունների, դեղաբույսերի, տրեկների անունները ամփոփող բառարանների մասին¹:

2. Միջնադարյան շրջափուլ, որն ընդգրկող X—XVI դդ. ժամանակաշրջանում ստեղծված հեղինակային և ընդհանուր բնույթի բառարանների մեծ մասը միջնադարյան Հայաստանի լքարձրագույն կրթօջախներում՝ համալսարաններում, դասավանդվող առանձին առարկաների հավելվածներ էին:

3. Ուշ միջնադարյան շրջափուլ, որը ներառում է XVII—XVIII դդ., երբ առավելապես կաթոլիկական-քարոզչական նպատակով հայ բառարանագրու-

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V—XVI դդ.), Երևան, 1966, էջ 50—51:

թյունն արժանանում է նաև Եվրոպացի մտավորականների ուշադրությանը, որոնք էլ հրատարակում են հայ առաջին տպագիր բառարանները:

4. ՄԵ շրջան՝ երկու շրջափուլով. առաջինը՝ XIX դ. սկզբից մինչև 70-ական թվականները, երկրորդը՝ 80-ական թվականներից մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Այս ժամանակահատվածում արևմրտահայ իրականության մեջ հայ բառարանագրության հիմնական կենտրոններն էին Կ. Պոլիսը և Վենետիկը, իսկ Արևելյան հատվածում՝ Թիֆլիսը: Կարևոր բառարանների լեզուն գրաբարն էր: Դրանք տարբեր բնույթի բառարաններ էին՝ բացատրական, ստուգաբանական, ուղղագրական, մասնագիտական, բժշկագիտական, դեղագրության, աշխարհագրական, իրավաբանական, նաև երկրագիտական կամ թարգմանական և այլն:

5. Նորագույն շրջան. ընդգրկում է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը:

Հայ բառարանագրությունը իր բնույթով, սկզբունքներով ու նպատակներով, ինչպես նաև կատարելության առումով որոշակիորեն տարբերվում է այլ ժողովուրդների ստեղծած բառարանագրական հուշարձաններից: Այս տեսակետից հատկապես անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները՝ կապված վաղ միջնադարյան հայ բառարանագրության հետ.

1. Քանի որ մինչև X դ. հայ բառարանագրությունը սաղմնային վիճակում էր, թեև նկատելի էին այդ վիճակից դուրս գալու միտումներ, ուստի այն տակավին ինքնուրույն գիտամշակութային բնագավառ չէր:

2. Բառարանագրական ընդարձակ, աչքի ընկնող աշխատություններ գոյություն չունեին. կային հատուկներ բառացանկեր և սահմանումների (սկանոնք) հավաքածուներ:

3. Հայ բառարանագրական հնագույն նմուշները բառերի ու դրանց սահմանումների խառը բնույթի հավաքածուներ էին (բառերի այբբենական դասավորություն գրեթե գոյություն չունեին):

4. Բառարանագրական աշխատանքի հիմնական նպատակը դպրոցի և ուսուցման անմիջական պահանջների բավարարումն էր, հետևապես դրանց գիտատեսական արժեքը շատ բարձր չէր:

Միջնադարյան հայ բառարաններն իրենց բնույթով բազմազան էին՝ բացատրական, թարգմանական, ուղղագրական, հոմանիշների կամ համանունների, կայուն կապակցությունների (դարձվածքներ, թեմատիկ արտահայտություններ, առած-ասացվածքներ և այլն), հատուկ անունների (անձնանուններ ու տեղանուններ), սահմանումների ու կանոնների (սահմանք իմաստասիրականք), մասնագիտական, բարբառային (գավառական), ուսումնագիտական և այլն²:

Ուշադրության արժանի են նաև հայ իրականության մեջ ստեղծված հանգաբառարանները, որոնք թեև անհամեմատ ուշ շրջանի արդյունք են, սակայն դրանց նախատիպերը՝ հանգաբառարանները, գոյություն ունեն վաղ ժամանակներից ի վեր: Օրինակ՝ Զինաստանում առաջին հանգաբառարանը կազմվել է մոտ 2000 տարի առաջ³: Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվող ձեռագիր հանգաբառարանները վկայում են, որ Հայաստանում դրանք ստեղծվել են շատ վաղուց. Տգրանք միջնադարում և նոր ժամանակներում հանդիսացել են լրացուցիչ ուղեցույցներ քերթողության և ճարտասանական արվեստների համար», որոնցով «հիշյալ արվեստները սովորողները վարժվում էին նույնասկիզբ բառերը գործածելու մեջ, իսկ հանգաբառարանի օգնությամբ ձեռք էին բերում հմտություն, որպեսզի խոսքի մեջ կարողանան ըստ անհրաժեշտության ճիշտ գործածել նույնավերջ ու նմանավերջ բառերը»⁴:

Հայ իրականության մեջ ստեղծված հանգաբառարանները տարբեր բնույթի են՝ միակերպ, երկերկրյա, հետադարձ այբբենական հաջորդականու-

2 Նույն տեղում, էջ 26:

3 Տե՛ս Հայոց լեզվի հանգաբառարան, Երևան, 1976, էջ 5:

4 Նույն տեղում, էջ 6:

թյամբ, ըստ վերջին վանկի ձայնավորի հաջորդականության և այլն: Հայտնի են, օրինակ՝ Բազդասար Դպիրի հայ-թուրքերեն շափական սկզբունքներով հորինած երկլեզվյա (Պոլիս, 1766), XIX դ. կազմված «Բառգիրք հոմավերջ բառից» (հայերեն-ֆրանսերեն երկլեզվյա բառարան), «Յանգարան, հալա-քումն պարսից և արաբացուց բառից համառօտ լուծմամբ ըստ դասաւորութեան այբբենական կարգի վերջնոյ յանգի»⁵, Մ. Մսերյանի կազմած «Բառարան նոյնայանգ բառից հայկական լեզուի» հանգարանը (էջմիածին, 1829), Խորեն վրդ. Գալֆայանի «Յանգարան, կամ բառգիրք յանգաց հայկազեան լեզուի» բառարանը (Թեոդոսիա, 1862), որը պարունակում է 12 հազար բառ և ընդհանուր առմամբ նման է Մ. Մսերյանի հանգարանին: Ուշագրավ են նաև Պ. Թերզյանի «Յանգարան նոյնաձայն և նոյնայանգ բառերու» (1905, Պոլիս) և Խ. վրդ. Աթանասյանի կազմած հանգարանը (Բեյրութ, 1961), որտեղ բառարանային միավորներ են համարված նաև պատրաստի խոսքաձևեր, ածանցներ, արմատներ, բառահիմքեր և այլն:

Հայ հանգարանաբանագրության վերջին, խոշոր նվաճումը «Հայոց լեզվի հանգարանաբան» է, որը պարունակում է 42 հազար բառ՝ հետադարձ այբ-բենական խոսքավորությամբ, հարմարեցված մեքենայական թարգմանությունների համար:

X—XIII դդ. հայ մշակույթի գործիչներին առավելապես հետաքրքրել են Սուրբ գիրքը և գիտափիլիսոփայական այն աշխատությունները, որոնք միջնադարյան Հայաստանի կրթօջախներում օգտագործվում էին որպես ուսումնական ձեռնարկներ: Բառարանագրական փորձերն էլ արվել են հենց այդ գրքերի հիման վրա: Բառարանագիրներին հատկապես հետաքրքրել են Աստվածաշնչի բառապաշարը, նրանում գործածված հատուկ անունները, որոնք էլ ցուցակագրվել են առանձին բառախմբերով կամ բառափնջերով: Աստվածաշնչի բառարանը սկզբնական շրջանում կազմվել է կամ թեմատիկ սկզբունքով, կամ էլ ըստ գլուխների. միայն հետագայում է այն վերածվել այբբենականի: Աստվածաշնչի բառապաշարի՝ ըստ գլուխների բառարանագրման մի նմուշ պահվում է Մատենադարանում (ձեռ. № 4283), որը բնութթով բացատրական բառացանկ է:

Միջնադարյան Հայաստանում ստեղծվել են նաև ուղղագրական բառացանկեր: Հայերեն առաջին ուղղագրական բառարանը կազմել է Արիստակես Գրիշը (XVI դ.): Բառարանագիրն այն անվանել է «Վերծանութիւնք» (մեկ այլ ձևագրում՝ «Վերլուծութիւն») բացերեալէս բազմազան բայից և բառից յոգնախումբ շարահրութեամբ արարեալ զսա Առիստակէսի գրչի և խնդրոյ բազմած յարհեստ գրչութեան»⁶:

XII—XIII դդ. հարգի էին «Բառք քերականի», «Բառք քերթողական» գիտական բառարանները, որոնք նպաստեցին հայերեն տպագիր բառարանների երևան գալուն:

Մոտավորապես սրանք են բառարանների այն տեսակները, որոնք գոյություն ունեին հայ իրականության մեջ: Ասվածին պետք է նաև ավելացնել, որ, առհասարակ, միջնադարյան հայ բառարանները, հետագա շրջանի բառարանագրական հուշարձանների հետ համեմատած, միակողմանի են, աղքատ, լի գործածությունից դուրս եկած, ինչպես նաև օտար բառերով ու հասկացություններով և մեծ մասամբ ընդգրկում են գովասանական բառեր, դարձվածքներ, կայուն կապակցություններ, անձնանուններ ու տեղանուններ, հոմանիշներ ու նույնանիշներ:

Միաժամանակ հարկ է նշել, որ, առհասարակ, հայ հին մատենագրության անվանացանկերում ձեռագիր բառարանները տեղ չեն գտել, ինչպես, օրինակ՝ «Բառք յունարէն», «Բառք քերթողական», «Եւթներորդ գլուխ գրոցս, որ կոչի բառգիրք...», «Բառարան Զաքարիա գրչի», «Բառք վարդապե-

⁵ Երկուսն էլ ձեռագիր են, պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 3110:

⁶ Մատենադարան, ձեռ. № 2373, էջ 159-ա:

տացն», թարգմանականներից՝ «Հայերեն-մոնղոլերեն բառացանկը», որ XIII դ. հայ մեծանուն պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկի հավելվածն է, «Արաբերեն-հայերեն-պարսկերեն բառարանը» (1371), Արիստակես գրչի «Ուղղագրական բառարանը», հոմանիշների բառարաններից՝ «Հանդէս բանաստեղծացը», դարձվածաբանական բառարաններից՝ «Բառարան բառամատոյցը» և այլն, որոնք, սակայն, խիստ արժեքավոր են և մեծ չափով նպաստել են հետագա բառարանների բառապաշարի համալրմանը:

Միջնադարյան հայ բառարանագրական հուշարձանների հետազոտման ընթացքում պարզել ենք դրանց մի շարք բնորոշ հատկանիշները.

1. Ի տարբերություն հին շրջանի, միջնադարյան բառացանկերը տրված են այբբենական կարգով:

2. Հնդհանուր բնույթի բառարաններից զատ միջին դարերում ստեղծվում են մասնագիտական, բացատրական, ուղղագրական և թարգմանական բառարաններ:

3. Ստեղծվում են նաև զրուցարաններ և ուղղագրական բնույթի բառացանկեր:

4. Հայն կիրառություն են ստանում տարբեր բնագավառների վերաբերյալ մասնագիտական բառարանները և գիտական բառախմբերը:

5. Փորձեր են արվում ընդգրկելու լեզվի ամբողջական բառապաշարը, միաժամանակ ստեղծելու գիտական բառարաններ:

6. Բառարանագրության ուղղությամբ տարվող աշխատանքները ձեռք են բերում կարևոր նշանակություն՝ դրվելով գիտական հիմքերի վրա:

Ամենևին չանտեսելով մեր հին շրջանի բառարանների հարստությունը, նրանց ունեցած հսկայական դերն ու նշանակությունը, հարկ ենք համարում նշել, որ դրանք շատ կոդմերով, հատկապես նոր հարաբերությունների հետևանքով և նոր իրադարձությունների պայմաններում առաջացած նորաբանությունների, նոր իմաստ ու նշանակություն ձեռք բերած բառերի ու տերմինների ընդգրկման տեսակետից զիջում են նոր, հատկապես խորհրդային շրջանում ստեղծված բառարաններին⁷: Համոզվելու համար հարկ ենք համարում բերել հետևյալ համեմատությունը. հաճախ և հաճախ արմատով կազմված բառահոգվածների քանակը ըստ ներքոհիշյալ բառարանների հետևյալ պատկերն է ներկայացնում.

1. Նոր բառգիրք Հայկազյան լեզվի—11

2. Առձեռն բառարան—11

3. Ս. Գաբամաճյան, Նոր բառգիրք հայերեն լեզվի—14

4. Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան—80

5. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան—90:

Բերված տվյալները վկայում են, որ ժամանակակից գրական հայերենն օրեցօր հարստանում է՝ իր մեջ ներառելով բազմաթիվ նորաբանություններ, նոր տերմիններ, հասկացություններ ու ըմբռնումներ:

Խոսելով հայ բառարանագրության մասին, հնարավոր չէ անտեսել նրա աշխարհագրությունը: Հայտնի է, օրինակ, որ աշխարհի մոտ 60 երկրներում սփռված հայերը հնուց ի վեր ապրելով տարբեր երկրներում, ուր էլ գտնվել են, ստեղծել են մշակույթի ազգային օջախներ, հիմնել տպարան ու դրպրոց, հրատարակել գիտական և ուսումնական ձեռնարկներ, գրքեր, նաև ամենատարբեր բնույթի բառարաններ, որոնց տպագրության աշխարհագրությունը չափազանց մեծ է ու լայն: Հայերեն և հայերենի հետ առնչվող բառարաններ են լույս տեսել առավելապես Կ. Պոլսում ու Վենետիկում (բոլորից շատ), ինչպես նաև Վիեննայում, Կալկաթայում, Կահիրեում, Թեհրանում,

⁷ Մենք նկատի չունենք հին բառարանների ակնհայտ առավելություններից ամենակարևորը, այն, որ դրանք գրաբարի բառապաշարի ընդգրկման առումով, անժխտելի է, ավելի լիարժեք ու կատարյալ են և այս տեսակետից գերազանցում են նոր, նաև խորհրդային շրջանում ստեղծված բառարաններին, որոնք, հասկանալի պատճառներով գրաբարի բառապաշարի միայն մի շնչին մասն են ընդգրկում:

Երուսաղեմում, Բեյրութում, Հոռմում, Սոֆիայում, Լոնդոնում, ԱՄՆ-ում, Փարիզում, Պետերբուրգում, Մոսկվայում, Թիֆլիսում. Բաքվում. Արևելյան և Արևմտյան Հայաստանի մի շարք կենտրոններում՝ Երևանում, էջմիածնում, Ալեքսանդրապոլում, Զմյուռնիայում և այլուր, մի խոսքով՝ աշխարհի գրեթե բոլոր մեծ ու փոքր գաղթօջախներում: Մինչև այժմ հրատարակված հայերեն և հայերենի հետ առնչվող բազմալեզվյա թարգմանական, բացատրական, ստուգաբանական, դարձվածաբանական և այլ բնույթի բառարանների ամբողջությունը կազմում է մի պատկառելի թվաքանակ՝ 450 բառարան⁸, հիմնականում կազմում է մի հարստություն: Հայը, որտեղ էլ խառնվել է ձգել, իր անուրանալի ընդունակությունների շնորհիվ արագորեն տիրապետել է մեկ կամ մի քանի օտար լեզվի՝ ստեղծելով այդ լեզվի և հայերենի համադրական քերականություն, բացատրական կամ թարգմանական բառարան, ուսումնական, ձեռնարկ և այլ բնույթի գործեր: Հարկ է նշել նաև, որ հայերենի նկատմամբ, հատկապես՝ բառարանագրական առումով, մեծ հետաքրքրություն են ցուցաբերել օտարները⁹:

Հետաքրքիր և ուշագրավ աշխատանք է Կ. Պ. Պալլասի կազմած բառարանը, որը պարունակում է եվրոպական 51 և ասիական 149 լեզուներով ներկայացված մի մեծ բառախումբ¹⁰: Ի տարբերություն հրապարակի վրա եղած բառարանների հեղինակների, Գ. Պալլասը գերադասել է բառահոգվածները ներկայացնել թեմատիկ սկզբունքով: Նրա բառացանկերը սկսվում են Աստված (Бог) բառով: Հայերենին բառացանկում հատկացված է 107-րդ տեղը: Գ. Պալլասի բառարանի նմանօրինակն է Ֆ. Յանկովիչ ղեկավարող Միրիևիչի կազմած բառարանը¹¹, որտեղ հայերի մասին նշված է. «Ձախազան գիտնականների կազմած ձեռագիր բառարաններից ընտրել եմ պարսկերեն և արաբերեն լեզուների տարբերությունը: Այդ նույն կերպ եմ մոտեցել և հայոց լեզվին...»¹²: Բառարանագիրը հայերենի մասին միաժամանակ նշում է, որ այդ լեզուն ունի երկու տարբերակ՝ բուն գրական և խոսակցական, որոնց առանձնահատկություններին և տարբերություններին՝ «և ինքն անդրադարձել է իր բառարանի առաջաբանում: Ռուս բառարանագիրը, սակայն, մեծ մասամբ նախընտրել է գրաբարի և խոսակցական հայերենի ձևերը, օրինակ, Бог-энь Астуаць, Астваць; Небо-Еркинкь-Ергинкь; Отец-Гайрь-Хайрь; Мать-Майрь; Сын-Устры; Дочь-Дустрь; Лицо-Эресь, Керпарань; Солнце-Аревь; Страна-Еркирь և այլն: Օտար հայագետների բառարանագրական աշխատանքներից ուշագրության արժանի է Ֆրանչեսկո Ռիվոլայի «Բառգիրք հայոցը», տպագրված Փարիզում, 1633 թ., որը թեև հայերեն-լատիներեն է անվանված, սակայն մեկ ընդ մեջ էջերը հայերեն-լատիներեն և լատիներեն-հայերեն են: Այն պարունակում է 11 հազար 500 բառահոգված, ներառյալ նաև ոճեր, դարձվածքներ, նույնիսկ՝ ամբողջական նախադասություններ:

⁸ Այս մասին տե՛ս Վ. Խ. Ալեքսանյան, Հայ բառարանագրության անոտացված մատենագիտություն, Երևան, 1986:

⁹ L. Zamenov, *Universala vortero de la linguo Internatic Esperanto Eldano-Armena*, Paris, 1912; E. Castellius, *Lexicon Heptagloten Hebraicum, Chaldaicum, Syriacum, Samaritarum, Aethiopicum, Arabicum Cenjunctim et Persicum Separatim*, London, 1669; A. Fe'renc, 1000 szobol allo magyar-ormeny szotor, Erjebenvarosh, 1922; E. Riggs, *A Vocabulary of 6000 words used in modern Armenian but not found in the ancient Armenian-lexicons*, Smyrna, 1847; *Dictionnaire historique, géographique, philologique et critique pour servir d'annotations a l'histoire d'Arménie*, Paris, 1886. Վերջինս իբրև պատմահայր հորենացու «Հայոց պատմության» անվանացանկ, հայկական տեղանունների հետ մեկտեղ որոշակի տեղեկություններ է պարունակում նաև հարևան ժողովուրդների և նրանց տեղանունների վերաբերյալ:

¹⁰ Паллас П. С., *Сравнительный словарь всех языков и наречий*, т. I, СПб., 1787, т. 2, СПб., 1779.

¹¹ Ф. И. Янкович де Мириево, *Сравнительный словарь всех языков и наречий*, СПб., 1791.

¹² Նույն տեղում, էջ 3:

Հետաքրքիր է Դանիել Դյումարեսկու կազմած ասիական լեզուների համեմատական բառարանը¹³, նրանում նյութեր կան նաև հայերենի վերաբերյալ: Ինչպես այս և հայ-ռուսերեն մի շարք ուրիշ բառարաններ, որ ստեղծվեցին ժամանակի պահանջով, իրականում հայ-ռուսական մշակութային և առևտրատնտեսական հարաբերությունների ընդլայնման արգասիք էին: Հայտնի է, որ Ռուսաստանի հայաբնակ գաղթավայրերում՝ Աստրախանում, նոր նախիջևանում և այլուր հայերենը դիտվել է որպես կրթության պաշտոնական լեզու և դասավանդվել է զինվորական ու առևտրական ուսումնական հաստատություններում: Այս հանգամանքը ևս նպաստել է հայ-ռուսերեն (նաև ռուս-հայերեն) բառարաններ ստեղծելու գործին: Հարկ է նաև ավելացնել, որ վերոհիշյալ բնույթի բառարաններից բացի ռուսական ուրիշ այլ բառարաններում նույնպես զգալի տեղ է հատկացվում հայերենին¹⁴:

Հայ-ռուսերեն և ռուս-հայերեն բառարանների ստեղծման գործում մեր մշակույթի երախտավորների մեջ առանձնակի տեղ ունի Հարություն Դադբաշյանը, որի «Լիակատար բառարան հայերենից-ռուսերեն» (Թիֆլիս, 1911) և «Լիակատար բառարան ռուսերենից-հայերեն» (Թիֆլիս, 1906) բառարաններից առաջինը պարունակում է ավելի քան 70 հազար բառ և 20 հազար ոճեր, դարձվածներ, առած-ասացվածքներ ու պատրաստի որոշ խոսքաձևեր, իսկ երկրորդը՝ 125 հազար բառահոգված:

Հայ-ռուսական մշակութային և սոցիալ-տնտեսական կապերն առավել չափով ընդլայնվեցին և զարգացման նոր փուլ թևակոխեցին հատկապես Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո: Անցած յոթ տասնամյակների ընթացքում մեր հանրապետությունում լույս են տեսել ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բազմաթիվ թարգմանական-բացատրական, մասնագիտական գիտաուսումնական, ուղղագրական և այլ բնույթի բառարաններ, որոնցից հատկապես արժեքավոր և ուշադրության արժանի են Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանը» (1925), Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանը» (1968 և 1977), Ա. Ղարիբյանի, Ե. Տեր-Մինասյանի և Մ. Գևորգյանի հեղինակությամբ 1945 և 1960 թթ. լույս տեսած ռուս-հայերեն բառարանները, ԳԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Ռուս-հայերեն բառարանը»՝ չորս հատորով (1954—1958), ինչպես նաև «Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարանը»՝ Ռ. Մելքումյանի և Պ. Պողոսյանի խմբագրությամբ (1975) և այլն:

Հայ բառարանագրության արժանահիշատակ կոթողներից է Մխիթար Սեբաստացու «Բառգիրք Հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1749—1769) երկհատոր բառարանը, որի առաջին հատորը պարունակում է 54, իսկ երկրորդը՝ մոտ 45 հազար բառահոգված:

Հայ բառարանագրության գլուխգործոցը եղել և մնում է հայ մշակույթի երեկելի մեծությունների՝ Գ. Ավետիսյանի, Խ. Մյուրմեյանի, Մ. Ավգերյանի, ավելի քան 50 տարիների տքնաջան աշխատանքով ստեղծված «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» արժեքավոր աշխատանքը, որի երկու հսկայածավալ հատորը միասին վերցրած (1425 էջ) գրաբարի, հիրավի, «համատարած տիեզերածավալ» բառագանձի լիարժեք ամփոփումն են, կազմված ձև ժամանակի ձեռագիր և տպագիր աղբյուրների հիման վրա: Պարունակում է 55 հազար բառահոգված, որոնք ներկայացված են բազմակողմանի, բնագրային տեքստերից քաղված հարուստ փաստերով:

Հայ մշակույթի բնագավառում ընդհանրապես և հայ բառարանագրության մեջ մասնավորապես առանձնահատուկ տեղ ունեն Ավգերյան տոհմի շատ ներկայացուցիչներ, առավելապես Հարություն և Մկրտիչ Ավգերյանները:

¹³ Д. Дюмареский, Сравнительный словарь азиатских языков, СПб., 1762.

¹⁴ А. В. Старчевский, Карманный стоязочный словарь, т. I—II, СПб., 1887—1893; С. Зелинский, Объяснительный словарь татарских, грузинских и армянских слов, Тифлис, 1889; Н. И. Анненков, Ботанический словарь, СПб., 1876—1878 и др.

Հայ բառարանագրության աչքի ընկնող հուշարձաններից են Հ. Ավգերյանի «Բառգիրք» (Վենետիկ, 1840), «Բառարան անգլիերէն և հայերէն» (Վենետիկ, 1821), «Բառարան համառօտ ի հայէ ի ռաոդիականէ ի հայ» (Վենետիկ, 1812), «Բառարան համառօտ ի հայէ ի ռաոդիականէ» (Վենետիկ, 1817), «Բառարան անգլիերէն և հայերէն» (Կալկաթա, 1825), ինչպես նաև գիտատեսական «Բացատրութիւն չափուց և կշռոց նախնեաց առաջնորդութեամբ Եպիփանու, Խորենացույ և Շիրակացույ» (Վենետիկ, 1821) աշխատությունը, որտեղ բառարանային սկզբունքով վերոհիշյալ հեղինակների երկերի հիման վրա ներկայացված և բնութագրված են հայկական, պարսկական և ֆրանսիական չափերն ու կշռային միավորները: Մ. Ավգերյանի առավել նշանավոր բառարաններից են «Մնացորդք վարուց արոց տոնացոցին մերոյ» (Վենետիկ, 1815) և հատկապես նրա «Առձեռն բառարան Հայկազեան լեզուին» (Վենետիկ, 1846), որը թեև «նոր բառգիրք Հայկազեան լեզուին» տարբերակն է, սակայն բառաքանակով (ընդգրկում է 56 հազար 410 բառ) ոչ միայն առաջինին չի զիջում, այլև նրանից ավել է 1410 բառով: Նկատի ունենալով «Առձեռն բառարանին» մասսայականությունը և նրա մեծ պահանջը, այն 1865 թ. վերահրատարակվեց Գր. Ճելալյանի ջանքերով, Վենետիկում:

Հայ բառարանագրության մեծարժեք կոթողները շատ են. դրանցից առանձնանում է հատկապես Մեսրոպ Գույումճյանի «Ընդարձակ բառարան անգլիերեն-հայերեն» (Կահիրե, 1961), բառարանը: Այս պատկերազարդ, սովորածավալ (1416 էջ) բառարանն իր կառուցվածքով, սկզբունքներով ու նպատակներով տարբերվում է ինչպես հեղինակի, այնպես էլ, առհասարակ, հայերեն թարգմանական մյուս բոլոր բառարաններից: Այն պարունակում է համակողմանի բացատրությամբ ներկայացված ահռելի բառաքանակ՝ 100 հազար բառահոգով: Բառարանը բաղկացած է մի քանի թեմատիկ բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը առանձին մասնագիտական բառարանի արժեք ունի: Դրանք են՝ բժշկական՝ պարունակում է 4000, զինվորական՝ 3000, իրավագիտական՝ 2500, առևտրական՝ 2000, հասարակական՝ 1700, խմայնության՝ 1300, հատկաբանական և փեղանաբանական՝ 1000-ական, երաժշտական՝ 850 բառահոգով: Սրանցից բացի ընդգրկում է նաև 650 հատուկ և 400 դիցաբանական անուն-բառահոգով: Պակաս արժեքավոր չեն նաև Մ. Գույումճյանի ավելի քան 70 հազար բառահոգով պարունակող «Ընդարձակ բառարան հայերեն-անգլիերեն», որի վրա նա աշխատել է 20 տարի, ինչպես նաև «Ընդարձակ բառարան հատկաբանութեան և առաժներու» (Կահիրե, 1969), որի համար հեղինակը որպես բնաբան է ընտրել Ճ. Սկալիգերի հայտնի խոսքերը. «Ըթե որևէ դատավոր խիստ պատիժ է կամենում մեկին, թող դատապարտի նրան բառարան հորինելու»: Արժեքավոր գործ է նաև Մ. Գույումճյանի «Օտարալեզու իրավաբանական բառարանը» (Կահիրե, 1979), որտեղ անգլերեն գլխատառերի դիմաց ֆրանսերեն, հայերեն և տաճկերեն լեզուներով տրված են համապատասխան բացատրություններ: Ըթե ասվածին ավելացնենք, որ հեղինակի մի քանի բառարաններ, այդ թվում նաև տարբեր տարիներին գրված բազմալեզվյան բառարանները ցայսօր անտիպ են, ապա միանգամայն պարզ կդառնա, թե որքան մեծ ներդրում ու վաստակ ունի Մ. Գույումճյանը հայ բառարանագրության պատմության մեջ:

Անցյալի մեր բառարանագրության փորձը, ամենատարբեր բնույթի բառարաններում ամփոփված բառային (և ոչ միայն բառային) ծով հարստությունը հիմք են ծառայել խորհրդահայ բառարանագիրների համար՝ ստեղծելու նոր, առավել կատարելագործված ու ճոխ բառարաններ: Մշակութային և կրթալուսավորական օջախների ցանցի ընդլայնման, նոր կրթօջախների և հայագիտական կենտրոնների ստեղծման շնորհիվ գրվեցին բացարձակապես, ստուգաբանական, թարգմանական, ուղղագրական, հոմանիշային, դարձվածաբանական, տերմինաբանական և այլ բազմաթիվ մասնագիտական (լեզվաբանական, իրավաբանական, բժշկական, պոլիտեխնիկական, պոլիգրա-

Ֆիական, Երաժշտական, գրականագիտական և այլն) բառարաններ: Դրանցից հատկապես արժեքավոր է Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» (առաջին հրատ.՝ 1926—1935, հ. 1—7, երկրորդ հրատ.՝ չորս հատորյակով, 1971—1979), որը խոշոր ներդրում է ոչ միայն հայ, այլև համաշխարհային բառարանագրության պատմության մեջ: Լինելով ստուգաբանական բառարան, այն ավելի լայն շրջանակներ է ընդգրկում: Նրանում յուրաքանչյուր բառահոգոված բաղկացած է հինգ բաժնից՝ բառագիտական (գրված խարառն իր քերականական ձևերով, իմաստի բացատրությամբ, մատենագրական վկայություններով, տարագրություններով, ածանցված և բարդացված ձևերով), ստուգաբանության պատմության, ստուգաբանական (բառարմատի ծագումն ու զարգացումը), բառաբանության (բառի՝ արմատի տարբեր դրսևորումները և զարգացումները հայերենի բարբառներում), փոխառություններ: (հայերենից այլ լեզուների և նրանցից հայերենին անցած բառերը)¹⁵, որոնց փաստական բոլոր տվյալները վկայված են համապատասխան աղբյուրներից քաղված օրինակներով:

Հր. Աճառյանի բառարանագրական վաստակի մեջ նշանակալից տեղ է գրավում «Հայոց անձնանունների բառարանը», որը լույս է տեսել 1942—1966 թթ.՝ 5 հատորով: Մեղվաջան աշխատանքի շնորհիվ բառարանագիրն ի մի է բերել V—XVIII դդ. հայ մատենագրության մեջ հիշատակված անձնանունները, որոնց մեծ մասի վերաբերյալ տրված են մեկնաբանություններ, ծագումնաբանական տեղեկություններ:

Հայագիտության մեծ երախտավոր Ստ. Մալխասյանի քառահատոր «Հայերեն բացատրական բառարանը» նորագույն շրջանի հայ բառարանագրության խոշոր նվաճումներից է: Իր աշխատանքը ստեղծելով նախորդ բառարանների բառամթերքի հիման վրա, հեղինակը, այնուամենայնիվ, որոշակի նպատակ է հետապնդել. «Ըստ իմ ծրագրի, այս բառարանը պարունակելու է հայերեն լեզվով գրված ու խոսված բոլոր բառերը մեր մատենագրության սկզբից մինչև մեր ժամանակները, այսինքն՝ բառամթերքները գրաբարի, ստորին գրաբարի, ուսման, արդի գրական լեզվի և գավառական բարբառների՝ իրենց ստուգաբանություններով, հին և նոր ժամանակի փոխառյալ բառերը եվրոպական կամ արևելյան լեզուներից, ցույց տալով նրանց ծագումը, գրական լեզվի ու բարբառների բառերի ամեն մի նշանակության համար համապատասխան օրինակներ, քերականական ցուցումներ և այլն»¹⁶:

Վերջին երեք-չորս տասնամյակներում ինչպես խորհրդային Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում լույս տեսած հայերեն և հայերենին առնչվող բառարաններից առավել արժեքավորներն են Ե. Տեր-Ղազարյանի «Բառարան ֆրանսերեն-հայերեն» (Բեյրութ, 1957), Բ. Չաթոյանի «Գրական բառարան հայերեն-արաբերեն» (Հալեպ, 1954), է. Սելյանի «Հայերեն-բուլղարերեն, բուլղարերեն-հայերեն ուսումնական բառարան» (Սոֆիա, 1980), Վ. Մահակյանի «Համաբարբառ Աստվածաշունչ մատյանի հին ու նոր կտավարանաց արդի աշխարհաբանով» (Բեյրութ, 1963), Վ. Հարությունյանի «Հայերենից պարսկերեն բառարան» (Թեհրան, 1972), Հ. Թեքյանի «Առձեռն բառարան սպաներեն-հայերեն» (Բեյրութ, 1955), Ժ. Թադադյանի «Բառարան արաբերեն-հայերեն» (Բեյրութ, 1960) և մի քանի ուրիշ ուսումնագործական բնույթի բառարաններ:

1960—80-ական թվականներին խորհրդահայ բառարանագրությունը թևակոխեց զարգացման նոր փուլ. լույս տեսան ուրիշ բառարաններ ևս, որոնց կարիքը վաղուց էր զգացվում: Դրանցից հատկապես հիշատակության են արժանի Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը» (1973), որը պարունակում է ժամանակակից

¹⁵ Այս մասին տե՛ս Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 23:

¹⁶ Հայերեն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասյան, հ. 1, Երևան, 1947, էջ է:

գրական հայերենի բառապաշարը (ավելի քան 152000 բառ), Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը» (1967), որտեղ հավաքված և է մի են բերված հայոց լեզվի ավելի քան 83 հազար հոմանիշային բառ և դարձվածաբանական միավոր, ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի շանքերով ստեղծված քառահատոր «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը», որն ընդգրկում է արդի գրական արևելահայերենի բառապաշարը՝ ավելի քան 100 հազար բառահոգով, է. Աղայանի երկհատոր «Արդի հայերենի բացատրական բառարանը» (Երևան, 1976), որը խորհրդային շրջանում ստեղծված բոլոր տեսակի բառարաններից լիակատարն ու ճոխն է և աչքի է ընկնում բառերի բազմակողմանի մեկնաբանությամբ ու բացատրություններով: Վերջին երկու-երեք տասնամյակներում լույս տեսած դարձվածաբանական բառարաններից հատկապես ուշագրավ են Ռ. Մելքոնյանի և Պ. Պողոսյանի կազմած «Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարանը» (1975, որը պարունակում է ռուսաց լեզվի շուրջ 5600 դարձված և 1670 դարձվածային տարբերակ ու փոփոխակ՝ իրենց հայերեն համապատասխան դարձվածքների թարգմանությամբ, ինչպես նաև Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» (1975), որն ընդգրկում է ժամանակակից հայոց գրական լեզվի դարձվածքների ամբողջությունը¹⁷:

Հայտնի է, որ մինչև վերջերս հրապարակի վրա չկար հայ-ռուսերեն կատարյալ, օգտագործման համար պիտանի բառարան: Դրա անհրաժեշտությամբ թելադրված 1984 թ. լույս տեսավ «Հայ-ռուսերեն բառարանը», որը պարունակում է շուրջ 75 հազար բառային միավոր, որոնք ներկայացված են բազմակողմանի թարգմանությամբ և համապատասխան բացատրություններով: Բառացանկը ընդգրկում է ժամանակակից հայերենի ոչ միայն ընդհանուր գործածական բառերը, այլև մեծ թվով գիտական, հասարակական-քաղաքական ու տեխնիկական տերմիններ, հայ ազգային մշակույթին հատուկ անվանումներ, ինչպես նաև այլ բնույթի բառեր: Թարգմանական բառարաններից ուշադրության արժանի է «Անգլերեն-հայերեն բառարանը» (Խմբ. Հ. Ա. Ասմանզուլյան, Մ. Ի. Հովհաննիսյան, Երևան, 1984), որը պարունակում է 30 հազար բառ:

70—80-ական թվականներին հայ բառարանագրությունը հարստացավ նոր աշխատություններով, ինչպես՝ Ռ. Ղազարյանի «Ռուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-գերմաներեն բառարանը» (1981), Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանը» (1-ին հատ., 1988), Բ. Ղազարյանի «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականություն բառարան» (1982), Ա. Մարգարյանի «Հայոց լեզվի հապավումների բառարանը» (1975), նույնի՝ «Հայերենի բաղճյուսական բարդությունների բառարանը»¹⁸ և այլն: Ուշագրավ է Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարանը» (1987), որը ընդարձակ տեղեկություններ է պարունակում լեզվաբանական-հայերենագիտական գիտակարգերի, ինչպես նաև հայ նշանավոր լեզվաբան-հայերենագետների կյանքի ու գործունեության մասին: Այս բառարանի առավելություններից մեկն էլ այն է, որ բառահոգովածները ընդարձակ են, փաստաշիջ, որոնցից կարելի է օգտվել ըստ ամենայնի:

Խորհրդային շրջանում ստեղծվել են հայերեն և հայերենին առնչվող բացատրական, ուղղագրական, տերմինաբանական, դարձվածաբանական և մասնագիտական ուրիշ շատ բառարաններ ևս, հիմք է դրվել և արդեն ավարտվել է «Հայկական սովետական հանրագիտարանի» հրատարակությունը, ինչպես նաև հայկական համաբարբառի շարքը, որի մատենաշարով կազմվել և լույս են տեսել Ագաթանգեղոսի, Խորենացու, Նարեկացու, Դավիթ Անհաղթի, Եղնիկ Կողբացու, Նղիշի, Զենոն Իմաստասերի, Կորյունի, Հե-

¹⁷ Տե՛ս Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975, էջ XIII:

¹⁸ Տե՛ս Ա. Մարգարյան, Հայերենի բաղճյուսական բարդությունները, Երևան, 1980, էջ 87—300:

թում պատմիչի, Հովհ. Դրասխանակերտցու, Փարպեցու, Ղևոնդ Վարդապետի, Մխիթար Այրիվանեցու, Վարդան պատմիչի, Ավ. Իսահակյանի, Դ. Վարուժանի, Շ. Պետեֆիի, Կ. Մարքսի և Ֆ. Էնդելսի երկերի համաբարբառ ցանկերը, որոնք մեծ հնարավորություն են ընձեռում բազմակողմանիորեն ուսումնասիրելու ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից հայերենի բառապաշարը:

Ամփոփելով մեր միտքը, հարկ ենք համարում նշել, որ խոր հնություն ունեցող հայ բառարանագրության պատմությունը, ի շահ հայ մշակույթի, մեր լեզվի բառապաշարի, նրա հարստության համակողմանի ընդգրկման, թեև դրում է ավելի աշխուժացնել այդ բնագավառում իրականացվելիք աշխատանքները՝ ստեղծելով տարբեր բնույթի առավել կատարյալ ու անհրաժեշտ նոր բառարաններ:

ОЧЕРК ИСТОРИИ АРМЯНСКОЙ ЛЕКСИКОГРАФИИ

В. Х. АЛЕКСАНИЯ

Р е з ю м е

В армянской действительности рукописные словари составлялись в основном в виде словников и гнезд непосредственно после создания армянской письменности; они и послужили основой для вышедших в свет в дальнейшем (начиная с XVII в.) армянских печатных словарей, число которых, по последним данным, достигает 450.

Обширна география армянской лексикографии—словари издавались почти в 60 странах и городах. По своему характеру—толковые, этимологические, фразеологические, орфографические, орфоэпические, специальные и др.—и по словарному фонду эти словари занимают достойное место в истории лексикографии.

AN ESSAY ON THE HISTORY OF THE ARMENIAN LEXICOGRAPHY

V. Kh. ALEXANIAN

S u m m a r y

In the Armenian reality the handwritten dictionaries were compiled mainly in the form of vocabularies and clusters immediately after the creation of the Armenian writing; they served as a basis for later published (starting from XVII c.) typed Armenian dictionaries whose number, according to the latest data reaches 450.

The Armenian lexicographic geography is very extensive: the dictionaries have been published nearly in 60 locations. In their nature—explanatory, ethymological, phraseological, orthographic, orthopetic, special dictionaries etc., as well as in the stock of words these dictionaries occupy worthy places in the history of lexicography.